# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

**Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր** **28 ապրիլի 2023թ.**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Սոնա Մարգարյանը, Եղիշե Նազարյանը, Տիգրան Նազարյանը, Մարատ Շահբազյանը, Ծովինար Սարգսյանը և Ռոմիկ Վարդանյանը:

**Նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, խորհրդական՝ Գևորգ Սաքանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը, Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Օրդոյանը, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Այվազյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետներ Քրիստինե Պողոսյանը, Անի Հասրաթյանը և առաջատար մասնագետ Նաիրա Ստեփանյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նստաշրջանի՝ ապրիլի 28-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին:
4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի թիվ 39-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի թիվ 42-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 78-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
7) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
8) Անհատույց օգտագործման իրավունքով հողատարածք տրամադրելու մասին:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու մասին:
10) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորումն ապահովելու համար համաձայնություն տալու մասին:
11) Եղեգնաձոր համայնքի կողմից 2024 թվականին ներկայացվող սուբվենցիոն ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:
12) Ծառեր հատելու համար թույլտվություն տալու մասին:
13) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին.
***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,
2) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ Սարգիս Հարությունյանին /Եղեգնաձոր բնակավայր/ և Խորեն Հարությունյանին /Գետափ բնակավայր/՝ 20 000-ական (քսան հազար) ՀՀ դրամ,
3) Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Անի Միրզոյանին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
4) «Գլաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանին - 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Լ/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի՝ «Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողատարածքներ տրամադրելու մասին» թիվ 39-Ա որոշման հիմնական մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ.

«1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման (կադաստրային ծախկագիր՝ 10-001-0112-0016, հասցե՝ ք., Եղեգնաձոր Ն. Մշեցու փողոց 4/1 հողամաս) 0.03582 հա հողատարածքի 0.00590 հա, և 0.07176 հա-ից 0.00622 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0112-0029, հասցե՝ ք., Եղեգնաձոր Ն. Մշեցու փողոց 4/2 հողամաս) մակերեսներով հողատարածքները, 50 (հիսուն) տարի ժամկետով, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) տրամադրել քաղաքացի Մարիետա Ռազմիկի Երջանիկյանին (ծնված՝ 22.03.1964թ.)՝ հողատարածքներով անցնող ոռոգման ջրի ճանապարհից օգտվելու նպատակով:

2. Եղեգնաձորի համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանին՝ Մարիետա Ռազմիկի Երջանիկյանին հետ, օրենսդրությամբ սահմանված կարգով, կնքել սերվիտուտի պայմանագիր՝ 50 (հիսուն) տարի ժամկետով, ընդհանուր՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ տարեկան վճարով: Պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել քաղաքացու վրա:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու մասին» թիվ 42-Ա որոշման վերնագիրում և հիմնական մասի 1-ին կետում համայնքային բառից հետո լրացնել «և պետական» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ԹԻՎ 78-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տերմինալների տեղադրման համար թույլտվություն տալու, համապատասխան վճարների չափերը որոշելու և համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 63-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 78-Ն որոշման հիմնական մասի 4-րդ կետում «10 000 (տաս հազար)» թիվը փոխարինել «7 000 (յոթ հազար)» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին.

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝

1) 0.09967 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքի /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0276-0020/ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման փոխելու համար,

2) 1.12747 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքի /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0276-0018/ նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին.

***ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված հայտը՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Ս. Շահումյան փողոց 1/2 հողամաս հասցեում գտնվող 0.0025 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողը (կադաստրային ծածկագիր 10-001-0031-0059) 10 (տասը) տարի

ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դիզելային գեներատոր տեղադրելու նպատակով:

2. Եղեգնաձորի համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանին՝ ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հետ, օրենսդրությամբ սահմանված կարգով, կնքել անհատույց օգտագործման պայմանագիր՝ 10 /տասը/ տարի ժամկետով: Պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին.

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե g** .

1.Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին.

***ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ***

***ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:

2. Դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեից կատարել համապատասխան ներդրումը (համաֆինանսավորում):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը և այն հանգամանքը, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2024 թվականին Հայաստանի Հանրապետության բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի կողմից 2024 թվականին ներկայացվող, համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին.

1) «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային 3-րդ, 4-րդ, 20-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ և 29-րդ փողոցների լուսավորության ցանցի կառուցում»,

2) «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Ջորավար և Շահումյան փողոցների բարեկարգում և ասֆալտապատում»,

3) «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Մոմիկի 8, Սևակի 3, Նարեկացի 3, Անդրանիկի 3 և 12, Շահումյան 15, Միկոյան 15, Արսենյան 2 և 4 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգում և ասֆալտապատում»,

4) «Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում»:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ կազմել և Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի փաթեթները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով ներդրում կատարելու համար՝ համայնքի 2024 թվականի բյուջեում նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին.

***ԾԱՌԵՐ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, քննարկելով «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի տնօրենի 2023 թվականի ապրիլի 21 N 04/21-1 գրությունը՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքով անցնող Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 131+500 - կմ 134+600 հատվածի հիմանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող տարածներում առկա, շինարարական աշխատանքներին խանգարող ծառերը հատելու համար տալ թույլտվություն:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծառերը հատելուց հետո՝ որպես վառելափայտ տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին.
***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ Եղեգնաձոր համայնքի **ավագանին ո ր ո շ ե ց** .

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել՝ 2023 թվականի մայիսի 19-ը, ժամը 18:00-ն, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Մարինե Հովհաննիսյանը _____